

Մարիբասի ասորական ժամանակագրութիւնից
արաբերէն փաղուածներ *:

Այս վերնագրով 1902 փետրվարի 21-ին պր. Մաուր
կարդաց մի յօդուած Կայսերական Ռուսական Հնագիտա-
կան Ընկերութեան Արևելեան բաժնի նիստերից մէկում:
Յօդուածի նիւթը կաղում է Խորենացու և նրա աղբիւր-
ների հարցը: Դեռ շատ երկար ժամանակ այդ հարցը
կմնայ մասնագէտների համար դժուար լուծելի և կարօտ
բաղմատեսակ լուսաբանութեան: Այդ հարցին էին ան-
ցեալ և այս տարի նուիրուած անդղիացի Կոնիբեր հայա-
գէտի երեք յօդուածը, որ թարգմանուել են «Հանդէս Ամ-
սորեայ»ի 1902 և 1903 թ. համարներում, Ն. Ադոնցի մի
քննութիւնը, նուիրուած Սերէոսի պատմութեան սկզբում
գտնուող Անանուն գրութեան, Գ. Տէր-Մկրտչեանի յօ-
դուածը Ղ. Փարպեցու և Մ. Խորենացու աղբիւրների մա-
սին, տպուած «Արարատ»ի մէջ: Շատերը լսելով այդքան
եռանդուն աշխատանք, այդքան կենդանի հետաքրքրու-
թիւն, տրամադիր կլինեն, գուցէ ոչ անարդար, մի տե-
սակ վարակման նշան համարել այդ, թէև այդպիսի ընդ-
հանուր վարակումն էլ պէտք է ունենայ իւր պատճառը:
Խորենացին իւր պատմութեամբ հարուստ է բաղմաւոյ-
մանի գրական և պատմական տեղեկութիւններով. նա դա-
րերի ընթացքում թողել է զօրեղ, գերիշխող ազդեցու-
թիւն: Այսօր ևս, նոյն իսկ այնպիսիների համար, որոնք
այդ պատմութեան ժամանակի յետնութիւնը այլ ևս խընդ-
րական չեն համարում, չեն կարողանում կամ ուղղակի
դժուարանում են հայոց պատմութեան հին շրջանի վրայ:

* Арабское извлечение изъ сирійской хроники Марибаса,
тапուէց Записки Восточнаго Отд. Ими. Русск. Археол. Обще-
ства, томъ XIV եր. 078—091, ունի արտատպութիւն: Այս
յօդուածը մենք անցեալ տարի ուղարկել էինք «Մշակին» տպե-
լու, բայց մինչև սրա հասնելը Հ. Առաքելեանը սոյն նիւթի
մասին մի բանասիրական էր գրել, այդ պատճառաւ մերն ու-
շացաւ:

մինչև հինգերորդ դարը, այլ կերպ նայել քան Խորենացու ընդգծած շրջանակով։ Այդ պատճառով ամեն մի հայագետ բանասէր շատ հարցեր շոշափելու և ուսումնասիրելու ժամանակ, ստիպուած է լինում հաշի տռնել Խորենացու անձն ու պատմութիւնը, ստիպուած է լինում քննել և ուսումնասիրել նրան և հրապարակով յայտնել իւր հայեացքը նրա մասին։ Վերջի տասնեակ տարին չը գտնուեց ոչ մի հայ կամ օտարազգի հայագետ բանասէր, որ մի կամ մի քանի ուսումնասիրական յօդուածներով չմասնակցէր Խորենացու հարցի մշակման։

Եթէ, իրաւ, շատ քննութիւններ արդէն հնացել են, եթէ իսկապէս յայտնուեցին ծայրահեղ պահպանողական և էլ աւելի համարձակ կարծիքների կողմնակիցներ, իսկապէս մի ճշմարիտ արդիւնք այդպիսի ուսումնասիրութիւններից մնացել է։ Ամեն մի բանասէրի համար պարզուել է հետեւեալ տեսակէտը, Խորենացու բացարձակ հեղինակութեանը այլ ևս ոչ ոք հաւատ ընծայել չէ կարող. պահանջում է անպայման քննական վերաբերմունք դէպի նրա հաղորդած տեղեկութիւնները, և յիշած պատմական աղբիւրները։

Պր. Մառի կարգացած յօդուածը մի նոր փորձ է Խորենացու աղբիւրների քննութեան համար։ Նաու վարդապետը 1896 թ. նկարագրելով Միքայէլ Ասորու պատմութեան մի ձեռագիրն՝ առաջին անգամ՝ ուշադրութիւն դարձրեց, որ Միքայէլի աղբիւրների մէջ յիշուած է «Մարիբա Խալդէացու գիրքը», և որ Պարիզեան աղգային դրադարանում կայ Մարիբա Խալդէացու ժամանակագրութիւն անուամբ մի դրութիւն։ Նոյն 1896 թուին նախ քան Նաուն՝ Շաբօն ուսումնականը խոստացել էր հրատարակել այդ ժամանակագրութիւնը։ Այդ նոր գիւտի մասին լուրեր և տեղեկութիւններ տպուեցին հայոց թերթերում (Բազմավէպ 1896, իսկ Հանդէս Ամսօրեան տպեց 1897 հանգուցեալ Կարրիէրի մի նամակը)։ Կարրիէրը Հանդիսում տպած նամակով յայտարարեց, որ շուտով կհրատարակէ աւելի մանրամասն ուսումնասիրութիւն ամբողջ

ձեռագրի մասին, որով վերջնականապէս կապացուցանէ Խորենացու յետմութեան ժամանակը: Եւրոպացիներ խոստումը չկատարուեց, այդ պատճառով պր. Մառը Պարիզի գրադարանից բերել տալով բուն ձեռագիրը, անձամբ ծանօթացաւ նրա հետ: Այդ ձեռագիրը բաղկացած է ընդամենը 10 մեծագիր թերթից, արտագրուած 1889 թուին, աւելի հին՝ տեղ տեղ մաշուած, օրինակից և ներկայացնում է ոչ թէ Մարիբասի բուն աշխատութիւնը, այլ պարունակում է նրանից համառօտ փաղուածք: Սկզբնադիրը եղել է ասորերէն, մեր ձեռքը հասած քաղուածքը արաբերէն է, թէև գրուած է ասորի տառերով, բովանդակութիւնը կազմում է տիեզերական պատմութիւն՝ լի առասպելներով: Մառը համառօտաբար քննելով այդ արաբական քաղուածքի ժամանակի (վեցերորդ դար), սկզբնադրի, ծաւալի և լեզուի խնդիրները, գիտում է իւր գլխաւոր նըպատակին, — քննել այդ յիշատակարանի և Խորենացու պատմութեան առնչութիւնը:

Շատ բարդ է Խորենացու պատմութեան խնդիրը. այդ պատմութիւնը Հայոց հին պատմական գրականութեան ամենաբնորոշ մի արտագրութիւնն է. ըստ կարելոյն լիովին նրա մէջ տեղ են բռնել Հայոց հին գրական առձեռն բոլոր նիւթերը: Այժմ այլ ևս ոչ ոք չի կարող հաւատալ, որ այդ պատմութիւնը գրուել է արխիվների թղթերի, ժողովրդական բանահիւսութեան կամ ականատես վիհների թողած յիշատակարանների հիման վրայ: Նրա գրուածքի մէջ մտել են ստեղծաբանութիւններ, բայց այն չափով, որքան կարելի և բնական էր համարուում ժամանակի հասկացողութեամբ:

Ինչ վերաբերում է Հայոց պատմութեան գրելու ժամանակին, պր. Մառի կարծիքը հետեւեալն է. «Ժամանակը որոշելու ամենահաստատ կուտանները հետեւեալներն են. առաջին, այդ յիշատակարանի (Խորենացու պատմութեան) ընդհանուր ոգին, որ կրում է ազգային դոյն. երկրորդ, պատմագրի խորին համակրանքը դէպի յունական գրականութիւնը, և երրորդ, ասորական ծագումն ունեցող կամ

ասորական բովով անցած նիւթերի ընտրութիւնը, որ մեծ չափով պատմութեան էական հիմքն են կազմում: Հասկանալի է, որ այդպիսի յիշատակարան չի կարող պատկանել հինգերորդ, հայոց քրիստոնէական դրականութեան առաջին դարուն, այլ անհամեմատ աւելի ուշ ժամանակի գործ է, երբ ասորական բացարձակ ուղղութիւնը դարձել էր հին աւանդութեան սեպհականութիւն, իսկ նրան փոխարինող քաղաքակրթական յունասիրութիւնը դրականութեան մէջ արդէն առաջ էր բերել ազգային հայկական հոսանք:

Խնդրի վրայ այսպիսի բնդհանուր հայեացք ունենալով, եզրակացնում է պր. Մառը, այլ ևս այս կամ այն յիշատակարանը չի կարող մենակ առած վճռել Խորենացու հարցը. հետևապէս չպէտք է նաև մեծ յոյսեր տածել Մարիբասի նորագիւտ աղբիւրի նկատմամբ: Միայն այդ յիշատակարանը որոշ չափով նպաստում է Խորենացու հարցի պարզաբանման նախ՝ օգնելով նրա դէմ բարդած մի քանի մեղադրանքներ հերքել, և ապա վերահաստատում է Խորենացու այդ աղբիւրի, այսինքն Մարիբասի գոյութիւնը: Առաջին, Խորենացին (Գիրք Բ. գլ. 24) ասելով, որ Արքարթաւորի հայրը երկու անուն ունէր (Արշամ և Մանուկ), յիշատակում է ուրիշ նման օրինակ՝ Հերովդէս-Ագրիպաս: Կարրիէրը կարծել էր, որ Հերովդէս-Ագրիպաս անունների զուգակցութիւնը Խորենացու հնարածն է, Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան օգնութեամբ, մինչ այժմ՝ երեւում է, որ Մարիբասն արդէն ունէր այդ կրկնակի անունը: Երկրորդ՝ Խորենացու պատմելով (Գիրք Բ. գլ. 35), «գլուխ կանանցն Արքարու» Հեղինէն, ամուսնու մահից յետոյ Սանատրուկի կողմից կարգւում է Միջագետքի թագուհի «փոխանակ բարեացն զոր գտեալ էր (Սանատրուկ) ի ձեռն նորա յԱրքարէ»: Դարձեալ Կարրիէրը ենթադրել էր, որ «Միջագետքի թագուհի» Խորենացին է հնարել, օգտուելով Եւսեբիոսի պատմութիւնից, մինչ այդ անուանադրութիւնը կար արդէն Խորենացու աղբիւր Մարիբասի պատմութեան մէջ:

Սակայն միայն այդ երկրորդական նկատողութիւնները չեն կարող նորագիւտ յիշատակարանին առանձին կարեւորութիւն տալ. էական օգուտը հետեւեալն է։ Մարիբասի արաբական փաղուածքը խօսում է հայոց պատմութեան հնագոյն շրջանի մասին, ինչպէս Անանունը Սերէոս եպիսկոպոսի պատմութեան սկզբում և Խորենացին իւր Ա. և Բ. գրքերում։ Նորագիւտ յիշատակարանի հեղինակը կոչւում է «Մարիբաս», «Մարաբա», և «քաղղէացի», այնպէս ինչպէս Խորենացին կոչել է իւր աղբիւրի հեղինակին, «Կատինա» ասորերէն բառ է և նշանակում է «իմաստուն»։ Անանունը «Կատինան» թարգմանաբար կոչել է «փիլիսոփա»։ Այդ՝ պր. Մառը առանց կասկածելու եզրակացնում է, որ Խորենացու Մարիբասը, Անանունի Մարաբա Մծուրնացին և արաբերէն քաղուածքի բնագրի հեղինակը նոյն անձնաւորութիւնն է։ Հետեալպէս Խորենացին չէ ստեղծել այդ անունը, ինչպէս ոմանք ենթադրել են, այլ Մարիբասը եղել է և փրկչական Զ դարում ապրող յայտնի անձնաւորութիւն էր։

Ապա, այդ տեսակէտը հիմք ընդունելով, Մառը բաղդատում է երեք գրողների հայ պատմութեան հնագոյն ժամանակի մասին պատմածները։ Անանունը Հայոց պատմութեան մէջ ունի հայկեան շրջան, երբ իշխում էին հապետներ, Արշակունեան հարստութիւն, որի առաջի թագաւորը Արշակն էր (Խորենացու Վաղարշակը), և Արգաթից սկսած նոր հարստութիւն։ Արաբական քաղուածքում այդ առաջին թագաւորի անունը «Քեսրա» կամ «Քասրա» է, միայն նա չի յիշում որ այդ Քեսրան Արշակունի ծագում ունէր։ Խորենացին հայկեան շրջանը դարձրել է հայկական հարստութիւն՝ թագաւորներով, և Արգաթի ու Արշակունեաց շրջանները միացրել է թագաւորների ազգակցական կապերով, իբրև հայկական երկրորդ հարստութիւն։ Արաբական քաղուածքը նման է Անանունին. նա տեղեկութիւն չունի Արշակունիների և Արգաթեանների ազգակցութեան մասին, բայց ապացուցանում է միեւնոյն ժամանակ, որ Արգաթին Հայոց թագաւոր անուանելը Խորենացու հնա-

բաժը չէ, ինչպէս ոմանք ենթադրել են, այլ Ասորեոց մէջ կար այդպիսի տեղեկութիւն: Ասորի Մարիբասը արաբներէն քաղուածքում այդ առթիւ գրում է. «Երբ հայերը տեսան, որ պարսիկները թուլացան, իրենց համար ուրիշ թագաւոր կարգեցին և կոչեցին Արգար», կամ մի ուրիշ տեղում՝ «Արգարը թագաւորեց Եդեսիայում հայերի վրայ և նամակ գրեց Քրիստոսին»: Դժբախտաբար չկայ Մարիբասի իսկական աշխատութիւնը, այնու ամենայնիւ, որքան կարելի է եզրակացնել արաբական քաղուածքից, պարզ երևում է, որ թէ Անանունը և թէ մանաւանդ Խորենացին մտցրել են իրենց ազբիւրի՝ այսինքն Մարիբասի գրութեան մէջ փոփոխութիւններ և յաւելումներ: Ժամանակակիցները գիտէին Մարիբասի գրութեան Անանունը, որպէս զի մեկնի և արգարացնի այդ յաւելումները՝ հնարել է սեան վրայ գրած արձանագրութեան պատմութիւնը, որ իբր թէ գրել է տուել մի Արշակունի թագաւոր, իսկ Խորենացին աւելի համարձակ քայլ է արել. նա վեցերորդ դարում քաջածանօթ քրիստոնեայ Մարիբաս հեղինակին փոխադրել է հեթանոսական դարը, հայոց Վաղարշակ թագաւորի օրերը: Խորենացին էլ է յիշատակում սեան վրայ գրած արձանագրութիւնը, միայն աւելացնում է, որ դա լիկ քաղուածք էր Մարիբասի գրքից, իսկ ինքը (Խորենացին) օգտւում է ուղղակի բնագրից: Այս էական հարցերը քննելուց յետոյ, պր. Մառը մի քանի համառօտ տեղեկութիւն է տալիս ասորի հեղինակի անձնաւորութեան մասին:

Մար-Աբան նեստորականների կաթողիկոս էր, ծագումով պարսիկ: Սկիզբը սովորում է Մծբինում, ապա Եդեսիայում վարժւում է յունարէն. ճանապարհորդում է Կոստանդնուպօլիս և նախագուշակելով նեստորականների հալածանքը, այնտեղից փախչում է և Մծբինում պարապում ուսուցչութիւնով: Երբ 536 թ. Պողոս կաթողիկոսը մեռնում է, Մար-Աբան յաջորդում է նրան: Սելեկիայում դպրոց է հիմնում, կամ վերականգնում հին դպրոցը և ուսուցանում: Բայց իւր ուսուցման մէջ

ցոյց տալով չափազանց համարձակ յարձակումներ Ձրա-
գաշտի կրօնի դէմ, իւր դէմ գրգռում է Խոսրով առաջնի
բարկութիւնը (531—579)։ Խոսրովը նրան արսորում է
Ս. Գրէշյան և Սեւեկիայի եկեղեցին կործանում։ Կաթուղի-
կօսը այնտեղից խոյս տալով, կրկին գալիս է Սեւեկիա,
բայց այստեղ նրան բանտարկում են և նա մեռնում է
բանտում 552 թ.ին, թողնելով գրական աշխատութիւններ։

Ահա այս Մար-Աբան, վեցերորդ դարում յայտնի
ասորի գիտնականը, ճանապարհորդելով այլ և այլ կողմեր,
լուծանք տալով արևելեան ազգերի անցեալին և ժամանա-
կակից կեանքին, պր. Մառի կարծիքով, գրել է այն ժա-
մանակագրութիւնը, որի ասորերէն բնագիրը առ այժմ
չէ յայտնուել, այլ մնացել է արաբերէն թարգմադրւած։ Հայ
պատմագիրները՝ Անանունը և Խորենացին, օգտուել են
Մար-Աբայի գրութեան, իւրաքանչիւրը իւր կողմից զա-
նազան յաւելումներ գնելով։

Պր. Մառը արաբերէն բնագիրը ռուսերէն թարգմա-
նութիւնով պատրաստել է հրատարակութեան համար,
որը առժամանակ լոյս չտեսաւ նրա ձեռնարկած գիտնա-
կան ճանապարհորդութեան պատճառով դէպի Սինայ
լեռուր և Երուսաղէմ։

Միսրոպ Վարդապէս



«ՊԱՏՄԱԳԻՐԲ ՀԱՅՈՑ»

Ե Ի

ՄԻ ՔԱՆԻ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՓԵՏԱՑՈՍ ԲԻԶՆԵՍԻ ՄԵՍԻՆ.

Երբ անցեալ տարի պ. Ստ. Մալխասեանն առաջար-
կեց «Պատմագիրք Հայոց» հրատարակել, նորան դիտել
տուին, որ այլ կարևոր բաներ կան ժողովրդի համար,
և որ մեր մատենագիրներն արդէն հրատարակուած